# ՍՄԿԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ

ՍՄԿԿ Կենտկոմը որոշում ընդունեց «Ռուսաստանի 1905—1907 թվականների հեղափոխության 70-ամյակի մասին»: Որոշման մեջ նշվում է, որ 1975 թվականի հունվարին լրանում է Ռուսաստանի 1905—1907 թվականների հեղափոխությունն սկսվելու 70 տարին, հեղափոխություն. որի ժամանակ պրոլետարիատը, գյուղացիական մասսաների լայն խավերը, լենինյան կուսակցության ղեկավարությամբ. զենքը ձեռքներին ոտքի ելան ընդդեմ ինքնակալության, սոցիալական և ազգային ճնշման:

Դա իմպերիալիզմի դարաշրջանի առաջին ժողովրդական հեղափոխությունն էր: Այն ցույց տվեց. որ սկսվել է համաշխարհային պատմության նոր ժամանակաշրջան. քաղաքական ցնցումների և հեղափոխական ճակատամարտերի ժամանակաշրջանը: Թեև 1905—1907 թվականների հեղափոխությունը պարտություն կրեց, այն հզոր հարված հասցրեց ինքնակալությանը, կալվածատերերի և կապիտալիստների տիրապետությանը, փայլուն էջ գրեց դասակարգային պայքարի պատմության մեջ: «Առանց 1905 թվականի «գլխավոր փորձի»,— ընդգծել է Վ. Ի. Լենինը,— 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը անհնարին կլիներ»:

1905—1907 թվականների հեղափոխությունը նախապատրաստվեց երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման ամբողջ ընթացքով: Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի վերացումից հետո արագ տեմպերով աճում էր կապիտալիզմը. ձևավորվում և համախմբվում էր բանվոր դասակարգը. ամրապնդվում էր նրա դասակարգային ինքնագիտակցությունը: Միևնույն ժամանակ. Ռուսաստանը մնում էր ֆեոդալական-ճորտատիրական ուժեղ վերապրուկներ ունեցող երկիր: Ցարական ինքնակալությունը. որն արտահայտում էր կալվածատերերի շահերը և սերտորեն կապված էր խոշոր մոնոպոլիստական կապիտալի հետ, կաշկանդում էր երկրի արտադրողական ուժերի զարգացումը. արգելակում հասարակական առաջադիմությունը: Անտանելի էին բանվորների և գյուղացիների կյանքի պայմանները:

XX դարի սկզբներին Ռուսաստանը դարձավ իմպերիալիզմի ամբողջ սիստեմի հակասությունների հանգուցակետը, նրա առավել թույլ օղակը: Այստեղ փոխադրվեց համաշխարհային հեղափոխական շարժման կենտրոնը: 1900—1903 թվականների համաշխարհային տնտեսական ճգնաժամը. որն ընդգրկեց նաև ցարական Ռուսաստանը. ինչպես նաև ռուս-ճապոնական պատերազմը, ամբողջ մերկությամբ ցուցադրեցին ցարիզմի նեխվածությունը. ծայր աստիճան սրեցին տիրապետող դասակարգերի և աշխատավորական լայն մասսաների միջև եղած հակասությունները: Այս ամենը նպաստեց հեղափոխական ճգնաժամի արագ աճին:

1905—1907 թվականների հեղափոխությունը պատմության մեջ առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունն էր. որի մեջ պրոլետարիատը

հանդես եկավ որպես ինքնուրույն մարտական ուժ, սոցիալական ազատագրության համար պայքարող ճնշված մասսաների առաջնորդ: Նրա ղեկավար դերի մարմնացումը բոլշևիկյան կուսակցությունն էր՝ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ: Դա միակ կուսակցությունն էր, որն ուներ գործողությունների հստակ, գիտականորեն հիմնավորված ծրագիր: Լենինյան կուսակցությունը բարձր պարզեց հեղափոխական դրոշը, վճռականորեն պաշտպանում էր մարքսիզմը՝ ռևիզիոնիզմի դեմ մղվող պայքարում, ստեղծագործաբար զարգացնում էր մարքսիստական ուսմունքը, հեղափոխության ընթացքում այն միացնելով պրոլետարական ու դեմոկրատական մասսայական շարժման հետ:

Հեղափոխության տարիներին վառ կերպով դրսևորվեց Վ. Ի. Լենինի դերը որպես մարքսիզմի մեծագույն տեսաբանի և աշխատավորության առաջնորդի: Լենինը հիմնավորեց ժողովրդական հեղափոխության մեջ պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարը, ցույց տվեց, որ որքան լայն ու խորն է մասսաների հեղափոխական շարժումը, այնքան ավելի են աճում պրոլետարական կուսակցության, նրա գաղափարա-մարտական ու կազմակերպչական գործունեության դերն ու նշանակությունը: Հեղափոխության եռուն պահին, 1905 թվականի գարնանը, կուսակցության երրորդ համագումարը լենինյան գաղափարների հիման վրա մշակեց բանվոր դասակարգի, բոլոր աշխատավորների հեղափոխական պայքարի բոլշևիկյան ստրատեգիան ու տակտիկան:

Մարքսիզմի գանձարանում ակնառու ավանդ հանդիսացավ բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխության վերաճելու լենինյան տեսությունը: Հիմնված լինելով պատմական նոր դարաշրջանի, դասակարգային ուժերի տեղաբաշխման գիտական վերլուծության վրա, այն հարթեց հեղափոխական պրակտիկայի միակ հուսալի ուղին: Կյանքը լիովին հաստատեց լենինյան կուսակցության վերցրած քաղաքական կուրսի ճշտությունը և ցույց տվեց տրոցկիստների, մենշևիկների և մյուս մանրբուրժուական կուսակցությունների օպորտունիստական տակտիկայի անհիմն լինելը, դրա սնանկությունը:

Բանվոր դասակարգը մեծագույն համառությամբ վճռական պայքար էր մղում բոլշևիկյան մինիմում ծրագրի լիակատար իրականացման՝ դեմոկրատական հանրապետություն նվաճելու, ութժամյա աշխատանքային օր մտցնելու, կալվածատիրական հողերը բռնագրավելու համար:

Անսասան տոկունության, ազատության, սոցիալական արդարության և առաջադիմության համար զոհաբերությունների դիմելու պատրաստակամություն ցուցաբերեց բանվոր դասակարգը ցարական ինքնակալության դեմ մղված պայքարում: Նրա խիզախության և հերոսության անմար օրինակ են հանդիսանում համառուսաստանյան հոկտեմբերյան քաղաքական գործադուլը Պետերբուրգում և մյուս քաղաքներում, Ռուսաստանի կենտրոնում և ծայրամասերում տեղի ունեցած դասակարգային ճակատամարտերը: Հեղափոխության գագաթնակետը, ինչպես ընդգծում էր Լենինը, եղավ Մոսկվայի դեկտեմբերյան զինված ապստամբությունը: Բանվոր դասակարգն իր ուսերին կրեց պայքարի հիմնական ծանրությունը 1905—1907 թվականների հեղափոխության մեջ: Իր վճռական գործողություններով, անսահման հերոսությամբ և անձնվիրությամբ Ռուսաստանի պրոլետարիատը աշխատավորական լայն

մասսաներին պայքարի հանեց ընդդեմ ինքնակալության, կալվածատերերի և բուրժուազիայի:

Հեղափոխության ընթացքում, պրոլետարիատի մասսայական գործադուլների և զինված մարտերի ներգործության տակ, ծավալվեց գյուղացիական լայն շարժում: Պատմության մեջ առաջին անգամ սկսեց կազմավորվել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը: Ռուսական պրոլետարիատի և գյուղացիության հետ մեկտեղ ցարիզմի ու շահագործող դասակարգերի դեմ պայքար էին մղում Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մերձբալթիկայի, Անդրկովկասի, Միջին Ասիայի և Ռուսաստանի մյուս ազգային շրջանների բանվորներն ու գյուղացիները: Ղեկավարելով հեղափոխական պայքարը, կուսակցությունը ելնում էր լենինյան այն ցուցումից, որ ցարական միապետությունը տապալել կարող է միայն պրոլետարիատը, որն իր ետևից տանում է երկրի բոլոր ազգերի ու ազգությունների աշխատավոր մասսաներին: Ուժեղացավ հեղափոխական խմորումը բանակում և նավատորմում, որոնք ինքնակալության պատվարն էին: Ամբողջ աշխարհն իմացավ «Պոտյոմկին» զրահանավի նավաստիների նշանավոր սխրագործության մասին, որոնք անցան հեղափոխության կողմը:

Հեղափոխության ընթացքում, բանվոր դասակարգի, ժողովրդական մասսաների ստեղծագործության շնորհիվ, առաջացան պատմության մեջ չտեսնված քաղաքական կազմակերպություններ՝ բանվորների դեպուտատների սովետները, իսկ դրանցից անմիջապես հետո՝ գյուղացիների ու զինվորների դեպուտատների սովետները: Դրանք ստեղծվեցին Իվանովո-Վոզնեսենսկում, Պետերբուրգում, Մոսկվայում, Ռոստովում, Սարատովում, Բաքվում, Կիևում, Եկատերինոսլավում, Սևաստոպոլում, Կոստրոմայում, Չիտայում, Կրասնոյարսկում, Իրկուտսկում, Սմոլենսկում, ուրիշ շատ քաղաքներում և ավաններում՝ գործադուլային պայքարը և զինված ապստամբությունը ղեկավարելու համար: Սովետները, Լենինի բնորոշմամբ, հանդիսանում էին հեղափոխական իշխանության, պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի սաղմեր: Լենինի հանճարը խորաթափանցորեն դրանց մեջ տեսավ սովետական իշխանության նախատիպը, պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձևը: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, ՍՍՀՄ-ի պատմական փորձը ամբողջովին ու լրիվին հաստատեցին սովետների մասին լենինյան ուսմունքի կենսական ուժը, որոնք իսկական ժողովրդական իշխանության ամենամասսայական մարմիններն են, իսկական դեմոկրատիայի արտահայտությունը:

Ռուսաստանի առաջին հեղափոխությունը միջազգային մեծ նշանակություն ունեցավ: Այն հսկայական ներգործություն ունեցավ աշխարհի շատ երկրներում բանվորների և գյուղացիների հեղափոխական ելույթների աճի վրա, առաջ բերեց գաղութային Արևելքի ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման հուժկու վերելք: Այս ամենը խարխլում էր կապիտալիզմի համաշխարհային սիստեմը, մոտեցնում նրա ընդհանուր ճգնաժամը:

Սովետական մարդիկ մեծապես հարգում են հեղափոխության հերոսների փառավոր սխրագործությունը: Ռուսաստանի առաջին ժողովրդական հեղա-

փոխության պատմությունը ստեղծագործական ոգեշնչման անսպառ աղբյուր է, քաղաքական պայքարի դպրոց՝ հեղափոխական մարտիկների նոր սերունդների համար։ Մեր ժամանակներում, երբ միջազգային բանվոր դասակարգը ղեկավար դեր է նվաճում լայն ու հզոր համադեմոկրատական, հակաիմպերիալիստական շարժման մեջ, ռուսական առաջին հեղափոխության պատմական փորձը, աշխատավոր մասսաների հեղափոխական պայքարի մեջ պրոլետարիատի հեգեմոնիայի մասին լենինյան գաղափարները առանձնահատուկ հրատապություն են ստանում։

Բոլշևիկների կողմից մասսաների քաղաքական ղեկավարման կուտակված փորձի խոր ընդհանրացումն ու հմուտ օգտագործումը, օպորտունիզմի և ռևիզիոնիզմի դեմ, բանվոր դասակարգի միասնության և ազատագրական շարժման մեջ նրա հեգեմոնիայի համար, աշխատավորների լայն խավերի հետ պրոլետարիատի դաշինքի համար մղված անհաշտ պայքարը հեշտացրին և արագացրին ցարիզմի տապալումը 1917 թվականի փետրվարին և շահագործողական հասարակարգի վրա հաղթական գրոհը՝ մեծ Հոկտեմբերի օրերին։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը բացեց մարդկության պատմության նոր դարաշրջան՝ սոցիալիզմին անցնելու դարաշրջանը։ ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցումը նշանավորվեց ակնառու հաղթանակներով, որոնք վերափոխեցին մեր հայրենիքի դեմքը, ամրապնդեցին նրա հզորությունը, հասցրին տնտեսական և սոցիալական առաջադիմության գագաթներին։

Կուսակցության վերափոխիչ գործունեության, սովետական ժողովրդի հերոսական աշխատանքի կարևորագույն արդյունքը եղավ զարգացած սոցիալիստական հասարակարգի ստեղծումը։ Այժմ, կուսակցության ղեկավարությամբ, իրագործելով ՍՄԿԿ XXIV համագումարի պատմական որոշումները, երկրի աշխատավորները նոր հաջողությունների են հասնում կոմունիստական շինարարության բոլոր ասպարեզներում։ Աճում է մեր պետության տնտեսական հզորությունը, արտադրության արդյունավետության բարձրացման, գիտատեխնիկական առաջադիմության արագացման հիման վրա անշեղորեն բարձրանում է սովետական ժողովրդի բարեկեցությունն ու կուլտուրան, ամրապնդվում է սովետական հասարակության գաղափարա-քաղաքական միասնությունը։

Միջազգային բանվոր դասակարգի, բոլոր հեղափոխական ուժերի մեծագույն նվաճումն ու ձեռքբերումն է սոցիալիզմի համաշխարհային սիստեմի առաջացումն ու հաջող զարգացումը։ Մշտապես խորանում է սոցիալիստական համագործակցության երկրների բազմակողմանի գործակցությունը։ Բազմապատկելով պանծալի հեղափոխական ավանդույթները, ՍՄԿԿ-ն, մարքսլենինյան մյուս կուսակցությունների հետ մեկտեղ, ակնառու ավանդ է մուծում իմպերիալիզմի դեմ՝ համաշխարհային կոմունիստական, բանվորական և ազգային-ազատագրական շարժման բոլոր ջոկատների համախմբման համար, խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի գործի հաղթանակի համար ժողովուրդների ընդհանուր պայքարի մեջ։

Կարևոր նշանակություն տալով 1905—1907 թվականների հեղափոխության հոբելյանին, ՍՄԿԿ Կենտկոմը որոշեց Ռուսաստանի առաջին հեղափո-

խության 70-ամյակը նշել որպես լենինյան կուսակցության և մեր երկրի պատմության, համաշխարհային հեղափոխական շարժման պատմության նշանակալի տարեթիվ։

Միութենական հանրապետությունների կոմկուսների կենտկոմներին, կուսակցության երկրկոմներին, մարզկոմներին, սովետական բանակի և ռազմածովային նավատորմի գլխավոր քաղաքական վարչությանը, սահմանապահ և ներքին զորքերի քաղվարչություններին հանձնարարված է հոբելյանի անցկացման աշխատանքը նպատակամղել ՍՄԿԿ XXIV համագումարի, ՍՄԿԿ Կենտկոմի 1974 թվականի դեկտեմբերյան պլենումի առաջադրած խնդիրների հաջող կենսագործմանը, 1975 թվականի՝ իններորդ հնգամյակի եզրափակիչ տարվա առաջադրանքները ժամկետից շուտ կատարելուն։